Պարոն/Տիկին Հ. Կարապետյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանին

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

«03» 07 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակցի անունը, ազգանունը՝**

– Սամվել Պետրոսյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը –**

- հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները – Բրյուսել** (Բելգիա), 2025 թվականի հունիսի 30-ից հուլիսի 2-ը.

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** – Էներգետիկ համայնքի քարտուղարության Էներգետիկայի եվրոպական կարգավորողների խորհուրդ (ECRB):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** – էլեկտրաէներգիայի շուկայի ինտեգրման և ածխածնային սահմանային կարգավորման մեխանիզմի (CBAM) կիրառման նպատակով Էներգետիկ համայնքի պայմանագրային կողմերի սիներգիայի ապահովման մասին տեխնիկական միջոցառմանը մասնակցելու համար.

6. **Քննարկված թեմաները (հարցերը)** – էլեկտրաէներգիայի շուկայի ինտեգրման և ածխածնային սահմանային կարգավորման մեխանիզմի (CBAM) կիրառումը Էներգետիկ համայնքի պայմանագրային կողմերում.

7. **Հանդիպումները, ելույթները. – ԵՄ և Էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի ներկայացուցիչների կողմից** ներկայացվեցին էլեկտրաէներգիայի շուկայի ինտեգրմանն ուղղված իրադարձությունները, առաջացած խոչընդոտները, ինչպես նաև

ածխածնային սահմանային կարգավորման մեխանիզմի (CBAM) կիրառումը Էներգետիկ համայնքի պայմանագրային կողմերում:

Ածխածնային սահմանային կարգավորման մեխանիզմի կիրառումը, համաձայն վերոնշյալ ներկայացուցիչների, կբերի շուկայի մասնակիցների ավելացմանը, այդ թվում սպառողների ակտիվ մասնակցությանը, ապաածխածնացմանը, հետևաբար ընդհանուր մրցունակության բարձրացմանը, ի վերջո նպաստելով մատչելի էներգամատակարարմանը և շուկայի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը: Ներկայումս պայմանագրային կողմերի միջև միջսահմանային առևտուրը դեռևս զարգացած չէ, իսկ նշված մեխանիզմը կարող է ևս մեկ խթան հանդիսանալ այդ ուղղությամբ: Այդ են վկայում գների մեծ տարբերությունները ԵՄ-ում և պայմանագրային կողմերում:

Սակայն պայմանագրային կողմերի կողմից ներկայացվեցին նաև առարկություններ CBAM մեխանիզմի կիրառման վերաբերյալ, մասնավորապես՝ վերջինիս կիրառումը կհանգեցնի շուկաների ինտեգրման խաթարմանը պայմանագրային կողմերում, քանի որ CBAM մեխանիզմները տարբերվում են հզորությունների տեղակայման և գերբեռնումների կառավարման վերաբերյալ ԵՄ 2015/1222 կարգավորման մեխանիզմներից:

Ինչպես էլեկտրաէներգիայի 30-րդ Համաժողովում, մեկ անգամ ևս շեշտվեց, որ ներկայումս առկա չէ որևէ տեխնիկական լուծում, որը հնարավորություն կտա զուգահեռաբար իրականացնել շուկաների կապը և կիրառել այդ մեխանիզմը, և ևս մեկ անգամ կոչ արվեց մինչև 2026 թվականի հունվարի 1-ը շտապ փնտրել կառուցողական լուծումներ՝ բոլոր շահագրգիռ կողմերի կողմից բարձրացված մտահոգությունները լուծելու համար:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – հետագա համագործակցություն և էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի դասընթացներին մասնակցություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Առաջարկվում է ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով նախատեսված «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքների նախագծերի մշակման ժամանակ հաշվի առնել ԵՄ կարգավորումներով նախատեսված մուտքի իրավունքի, սպառողներին մատակարարման անխափանության (այդ թվում խոցելի սպառողների պաշտպանության),

աջակցության մեխանիզմների, պահուստային հզորությունների վերաբերյալ և այլ դրույթները: Հետագայում էներգետիկ համայնքի շրջանակում շուկայի ինտեգրման նպատակով անհրաժշտություն կառաջանա վերոնշյալ նախագծերում ներառել որոշակի դրույթներ հզորությունների տեղակայման և գերբեռնումների կառավարման վերաբերյալ ԵՄ 2015/1222 կարգավորումից, հատկապես՝ նշանակված էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի (NEMO) ֆունկցիաների մասով:

ԵՄ վերոնշյալ կարգավորումների կիրառումը, առանձին հարցերի քննարկմանը ՀՀ ներկայացուցիչների ներգրավումը կնպաստի հետագայում նշված կարգավորումներով սահմանված շուկայական մեխանիզմների ներդրումը Հայաստանում, ինչը կխթանի էլեկտրաէներգետիկ շուկայում մրցակցության զարգացմանը և կհանգեցնի արդյունավետության բարձրացմանը:

Գործուղվող ---------- 07.07.2025թ. ---------- ***Ս. Պետրոսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 497-ԳՔ, 26.06.2025թ**

3. ՀՀ ՀԾԿՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ՝Սամվել Պետրոսյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Բրյուսել /Բելգիայի Թագավորություն /**

5. Գործուղման ժամկետները **30.06.2025-02.07.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ,** օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սամվել Պետրոսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ) **60%**		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	56,729	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	170,187	170.187
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		170,187	170.187

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **03. 07.2025թ.**